Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Ա. Ղարիբյանի անվան հ. 142 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն» առարկայի (4 դասաժամ), «Պատմություն» առարկայի (9 դասաժամ), «Հասարակագիտություն» առարկայի (11 դասաժամ), «Ինֆորմատիկա» առարկայի (6 դասաժամ), «Թուրքերեն» առարկայի (14 դասաժամ), <<Կենսաբանություն>> առարկայի (15 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» առարկայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի I մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. սեպտեմբերի 13- ից մինչև 2023 թ.-ի սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 4-ին ժամը 12^{00} ին, ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի Ա. Ղարիբյանի անվան հ. 142 ավագ դպրոցում, հասցեն՝ Երևան, Նոր Նորք 4-րդ զանգված, Գյուլիքեվխյան 33:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)63-59-50 հեռախոսահամարով: